ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 55 – Ա **12 ապրիլի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 29 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.2-րդ ու 1.6-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավարության միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին>> N 29–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության առաջին կետը շարադրել նոր խմբագրությամբ

<<1. Մարզպետարանի աշխատանքների համակարգումը՝ ըստ մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության բնագավառների, վերապահել՝

1) **մարզպետին՝**
   - ա. ֆինանսներ, հարկային մարմիններ
   - բ. քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ-տնտեսություն
   - գ. ազգային անվտանգություն և վարժական հավաքներ
   - դ. զինապարտների հաշվառման, զորակոչի և զորահավաքի կազմակերպման խնդիրներ
   - ե. արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հարցեր
   - զ. ներքին աուդիտ

2) **մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին՝**
   - ա. տեղական ինքնակառավարման մարմիններ
   - բ. կրթություն, մշակույթ և սպորտ
   - գ. զարգացման ծրագրեր, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում
   - դ. զբոսաշրջություն, միջազգային համագործակցություն և արտաքին կապեր

3) **մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին՝**
   ա. գյուղատնտեսություն, բնության և շրջակա միջավայրի պահպանություն
   բ. հողօգտագործում և հողաշինարարություն
   գ. տրանսպորտ և ճանապարհաշինություն
   դ. տեղեկատվության և հասարակայնության հետ կապեր

4) **մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին՝**
   ա. առողջապահություն և սոցիալական ապահովություն
   բ. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ